

շատ անգամ կարտայայտելին իրանց մասնակցութիւնը հասարակական մեծամեծ պիտուածների դործին։ Նոքա երգերով և ուրախութեամբ ճանապարհ կձգելին յաղթական զօրքերին, կփառարանէլին յաղթականներին ևն։ Արէաների աղջեկները կերպուէլին իրանց մօր մօտ հնազանդութեան և Խստուծոյ երկիւղի մէջ, նոցա կուսուցանէլին զլխաւորապէս երգ, քնարահարութիւն և պար, յատկապէս նորա համար, որ նոքա աւելի նշանակութիւն և շքեղութիւն տային ժողովրդի կրօնական տօնախմբութիւններին։ Քայի զորանից աղջեկներին կհրահանգէլին առանձին հոգատարութեամբ բոլոր տնօյին և կանացի աշխատանքների և ընդհանրապէս այն ամեն բանի մէջ, որ կվերաբերուէր կնոջ հոգսերին, թէ ընտանեկան կեանքի պահանջների և թէ հասարակական կիանքի շքեղութեան նկատմամբ։ Անգ կտեսնենք խրայէլեան կանանց մէջ կրօնական խորին զզացումն, որ կարօղ է ապացոյց լինել սիրոյ և անձնանութիւնութեան վեհ հոգուն։ Վյապէս ուրեմն հրէայ կնոջ կեանքում մենք չենք զանում այն ճնշողութիւնն, որը շատ թէ քիչ յատկանիշն կերևի կնոջ հին աշխարհում ունեցած զրութեան մէջ։ Արէաների մէջ կտեսնենք, որ կինը համեմատաբար աւելի նշանակութիւն ունի ընտանիքում, թէև չենք անսնում նորա մէջ կատարելապէս մարդկային իրաւունքներն և արժանաւորութիւններն։

Ա. Գ. Ս.

### ՃԵՄԱՐԻՑԱ Ա. Զ. Գ. Ա. Ս. Ե. Ը. Ը.

Նատ մարդիկ կան, որոնք կցանկան ազգասէր կոչվել եւ սորա վերայ զարմանալու չենք. որովհեաեւ բարբարոսներն անգամ փոյժ եւ ջանք ունին աղգասէր կոչվելու. բայց միթէ կարող են. Ոչ երբէք. որովհեաեւ ազգասիրութիւնն եւո ունի իր համար այն ահագին եւ մեծ կրակն եւ այն վաեմ ու ծանր պարագաներն, որ ամեն մարդի գործը չէ նոցա վերայ պայծառու ճշմարիտ գաղափարներ կազմել, եւ թէ պարագաների հակառակութիւններին յաղթելով, նորա անթառամ պատկն իւր ճակատին վերայ հիւսել առ ի յիշատակ յաւիտենական գովետի։

Վայր ի վերոյ կարծիքներով, շահապիրական յոյսերով, անմիտ խորհուրդներով եւ լոկ միայն խօսքով ազգասէրներ շատ կան. բայց այսպիսիներն ազգասէրի ստուերն անգամ չեն կարօղ համարվել. այլ թէ բարօյապէս մի մի զարհուրելի ահեղ գաղանների կնմանեն, որոնց վախճանը շահապիրութիւնն եւ թեթեւամիտ փառասիրութիւնը լինելով արժանի չեն երբէք ազգասիրութեան անուն ժառանգել. Նոքա միայն կարօղ են ազգասէրի պարծանքն եւ փառքն ստանալ որոնք ազգասիրութեան բոլին մէջ եզած այն կրակից աւելի մեծ եւ ահագին կրակով վառված են, այսինքն ճշմարիտ եւ վեհանձն ազգասիրութեամբ, մաքուր եւ անշահասէր ազգասիրութեամբ, եւ

այսպէս վեհանձն եւ ճշմարիտ աղքա-  
սէրը ոչ թէ միայն իւր ոսկին եւ ար-  
ծախը չէ ինայում, այլ եւ իւր անգին  
կեանքն անգամ զոհ կդնէ իր աղքին  
համար: Նա մշտնջենաւոր ուխտով  
կապված է իւր աղքին հետ ամենից ա-  
ռաւել եւ ամենից յառաջ հաստատուն  
պահելով իր հայրենի լեզուն, իր եկե-  
զեցին եւ աղքային ստվարութիւններն  
եւ աւանդութիւններն: Նա նպատակ-  
ված է միշտ իւր աղքի օգտին եւ բա-  
րելուութեան համար աշխատել, վեր-  
ցնելու նորանից տեսակ տեսակ թշուա-  
ռութիւններն, քրտինք թափել, տա-  
ռապել, չարչարվել իւր փշված վատ-  
նված աղքի բարեկարգութեան եւ պայ-  
ծառութեան համար: Նա երբէք չի  
յուսար իր արածին փոխարէնը իր  
աղքից ստանալու եւ կամ նորանից  
գովեստ լսելու ակնկալութեան: այն-  
պէս իմն երեւակայելով, որ իրը թէ  
իր բոլոր արած բարիքներն աղքի հա-  
մար մեծ չարիքներ պիտի երեւին, ուս-  
տի կարծես թէ աղքամէրին անջնջելի  
ճակատագիրն է արհամարհվել իր  
աղքից, նախատվել, հալածվել, բամ-  
բառել, գրաբառվել, քարկոծվել, բա-  
րայապէս ի խաչ ելանել: Այժմ ո՞վ կա-  
րող է չվկայել, որ թէ յիշաւի աղքա-  
սէր մարդին վառող եւ բորբոքող կը-  
րակներն շատ մեծ են:

Ել ուրեմն, վշտակիր Աղքասէր, ել  
առ, ու կարդա քո աղքի պատմաւթիւ-  
նըն, եւ քեզ քաջալերող միսիթարու-  
թիւններն յիշատակելով որբեր այքե-  
րեցի այդ քաղցր արտասաւքը, որ կթա-  
փեմ ոչ թէ քո կրած վշտակիրի

թշուառութիւնների համար, որոնք յօ-  
ժար սրտով եւ ծայրագոյն վեհանձնու-  
թեամբ տարար եւ կտանես յաւիտեան  
այլ անզգայ մարդիկների ունայնամուռ-  
թեան եւ գաղանաբարոյւթեան վե-  
րայ, որոնք չարաչար կյարձակէին յա-  
փըշտակել քո վեհ ճակատից աղքասի-  
րութեան պսակն, եւ քո աղքի սիրոյն  
համար թափած քրտինքն եւ մարդար-  
տագարդ թագ ձեւացաւ լուսապանծ ի  
նշան եւ ի ցոյց թէ սա է աղքասէրն,  
սա է աղքի զարգն, աղքի պարձանքը,  
աղքի կենդանութեան արշալոյսն:

Ահաւասիկ, այժմեան նոր եւ լուսա-  
ւոր դարի գեղեցիկ պատմագիրն եւս  
արգէն սկսեց զօւարթ եւ ուրախ դրչով  
գրել անունդ իր անմահ գրքին վերայ-  
բայց ես մի քանի օրից յետոյ իմ ջախ-  
ջախ քնարիկը ուսս առած, Կիոզէնեան  
ճրագը ձեռիս, երգելով պիտի շրջեմ  
• Արարատի զաւակներիդ մէջ. այլ թէ  
աղքասիրութեան ջերմ սիրով ծլած  
ու ծաղկած քանիներն (այսինքն քանի  
աղքասէրներ) արգեօք պիտի գտնեմ  
արժանաւոր գովեստներով եւ տառե-  
րով իմ յիշատակարանին մէջ արձա-  
նացուցանելու, տակաւին չգիտեմ:  
Մինչդեռ չաղքասիրութեան խաւարով  
ծածկված, չար խօրհուրդներով մարու-  
ված ու շահառէր գործերով նպատակ-  
ված աղքամէրների կամ աղքացեցների  
խումբերն պատել են մեր շուրջ եւ  
կխանգարեն հայկական աղքի բարոյա-  
կան աղքագանց կմագանեն հայկական  
աղքի յառաջադիմութիւն:

**Վեհապետական պատմութեան մասին**